

մութեամբն Աստուծոյ վասն փրկութեան հոգւոց մերոց . եւ ի համախոհ ընկերք սորին զտէր Սարգիս եպիսկոպոսն , զտէր Թումայ եպիսկոպոս հայր վանից եւ զայլ միաբանսն միախորհուրդ՝ թվով յիսուն կամ այլ աւելի» : Նոյն Մինաս երէց երկրորդ Հարանց վարք մ'ալ կ'օրինակէ ⁵ 1615ին «ի տեղիս որ գրեցան՝ երկրիս Էճանանու եւ ի գեղջէս Եղլինգեան . . . առաջնորդութեան սուրբ ուխտիս Մեսրոպ եպիսկոպոսէ եւ երջանիկ բարունապետին մերոյ Մովսէս վարդապետին եւ համախոյ այլ եղբարցն» : Անշուշտ աչք գոցելու է գրչէն քերականական անհմտութեանց . լայց շատ թանկագին են անոր հաղորդած այս մանրամասնութիւնները Անապատին կացութեան եւ յատկապէս Մովսէս վարդապետի հանած հռչակի մասին :

Դժուարութիւնները , զորոնք կը հանէին նորընծայ վարդապետին եւ եռանդուն քարոզչին առաջ տեղական եպիսկոպոսներն ու արեղաները , կը գտնէին ժամանակակից կաթողիկոսներու հաւանութիւնը . անոնք ոչ միայն լսող չէին վարդապետին ձայնին , այլ եւ կը հրամայէին , նոյն իսկ բանագրանքի սպառնալիքով՝ լռել . յատկապէս Մելքիսեդեկ կաթողիկոսի վրայ կը ծանրանար պատասխանատուութիւնը :

Բնականաբար այս հալածանքներու արձագանգը պիտի լսուէր նաեւ Արեւմուտք .

⁵ Ձեռ. էջժ. 785 (Կար. 783) :